ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝	Տնտեսագիտության դոկտոր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԴԱՎԻԹ ՎԼԱԴԻՄԻՐԻ
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՅԿ ԳԵՐԱՍԻՄԻ
	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ
Առաջատար կազմակերպություն՝	ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. հունիս 29-ին, ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. մայիսի 12-ին:

014 Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր՝ Մարտիրոսյան Տիգրան Սերյոժայի

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմանի արդիականությունը: Դրամավարկային քաղաքականությունը տնտեսությունում դրամաշրջանառության և վարկերի տեղաբաշխման գործում իրականացվող միջոցառումների համալիր է, որի վերջնական նպատակը կայուն տնտեսական աճի ապահովումն է: Այն ուղղված է գնաճի (ինֆլյացիայի) մակարդակի և դինամիկայի կարգավորմանը, ներդրումային միջավայրի կայուն ակտիվությանն ու աճին, ազգային արժույթի (դրամի) կայունության ապահովմանը և շուկայական տնտեսության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, և վերջապես, նշված ամբողջ գործողությունների համախմբի արդյունքում, գործազրկության մակարդակի վրա ազդեցությանը՝ կրճատման տեսքով:

Ոչ արդյունավետ դրամավարկային քաղաքականության արդյունքում երկրում առաջանում են շոկեր, գնաճը շեղվում է թույլատրելի սահմանից, ինչը հանգեցնում է երկրում տնտեսական անկայունության: Տնտեսական անկայունությունը ուղղակիորեն անդրադառնում է նաև դրամավարկային քաղաքականության և ֆինանսական կայունության վրա, որի հետևանքով տնտեսվարողները գնում են չարաշահումների և խուսափում են հարկերից, իսկ բնակչության մոտ տեղի է ունենում կենսամակարդակի անկում: Այդ իսկ պատճառով մեր կողմից դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրը դիտարկվել է որպես խիստ արդիական, հատկապես COVID-19 համավարակի, 44-օրյա արցախյան պատերազմի և ռուս-ուկրանինական հակամարտության համատեքստում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 200-րդ հոդվածով ամրագրված է, որ երկրում դրամավարկային քաղաքականության պատասխանատուն ՀՀ կենտրոնական բանկն է, որն այն իրականացնում է փողի առաջարկի կամ տոկոսադրույքի կառավարման միջոցով: Նշվածը կենտրոնական բանկն ամրագրում է իր դրամավարկային քաղաքականության ծրագրով, մշակում այն, հաստատում և իրականացնում: Երկրում դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունքում գնաճի թույլատրելի մեծությունը կազմում է 4 տոկոս ±1,5 տոկոս թույլատրելի շեղմամբ:

Դրամավարկային քաղաքականության իրականացմամբ՝ համապատասխան գործիքների կիրառության միջոցով, կենտրոնական բանկը փողը ներարկում կամ ներքաշում է տնտեսություն՝ առաջացնելով նաև իրացվելիություն: Բացի այդ, կենտրոնական բանկի կողմից փողի գնի կառավարմամբ երկրում նպատակադրված գնաճին հասնելու համար միաժամանակ կիրառում է արտարժութային քաղաքականություն՝ երկրում արտարժույթի և արժույթի կառավարման համար, և մակրոպրուդենցիալ քաղաքականություն՝ երկրի ֆինանսական կայունության պահպանման և կարգավորման համար:

Տնտեսության կենսունակությունը պահպանելու նպատակով երկրում վարվող տնտեսական քաղաքականությանը մասնակցում են համաժամանակյա և՛ կառավարությունը, և՛ կենտրոնական բանկը: Եթե կենտրոնական բանկը պատասխանատվություն է կրում դրամավարկային, արժութային,

մակրոպրուդենցիալքաղաքականությունների, ապա կառավարությունը՝ հարկաբյուջետային քաղաքականության համար:

Ատենախոսությունում դիտարկվել է ոչ միայն դրամավարկային քաղաքականությունը իր ածանցյալներով, այլ նաև վերջինիս փոխառնչությունները. գնահատելով հարկաբյուջետային և մակրոպրուդենցիալքաղաքականությունների վրա դրամավարկային քաղաքականության ազդեցությունը, տոկոսադրույքների փոփոխությունների ազդեցությունը բանկային համակարգի վրա, կապն իրական հատվածի հետ: Բացի այդ, ատենախոսությունում ուսումնասիրվել է կանխիկ և անկանխիկ գործառնությունների ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա, գների կայունության ապահովման համար կենտրոնական բանկի միջամտությունը վերջինիս կարգավորման գործում, ինչպես նաև ներկայացվել են գների և ֆինանսական կայունության ապահովման հիմնական ուղիները:

Դրամավարկային քաղաքականության ժամանակակից մոդելի և փորձի ուսումնասիրության և դիտարկման համար աշխատանքում անդրադարձ է կատարվել Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Շվեյցարիայի և Մեծ Բրիտանիայի դրամավարկային քաղաքականության մոդելներին և փորձին և այն դիտարկվել է Հայաստանի դրամավարկային քաղաքականության համատեքստում:

Ատենախոսությունը նվիրված է դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրներին, առկա վիճակին, մինչ այս վարված քաղաքականությանը, վերջինիս նպատակի իրագործման համար ձևավորված արդի հիմքերի ուսումնասիրությանը, գործնականում դրանց կիրառմանը: Մեր կողմից առաջարկվել է նոր ֆինանսական քաղաքականության բանաձևի սահմանման և կիրառության արդարացվածությանը, ինչի կիրառումը կբերի տնտեսության զարգացմանը և խելացի և տրամաբանական գնահատմանը, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության թեմայի արդիականությունն:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Ատենախոսության նպատակն է դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումը Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա, վերջինիս արդյունքում առաջացած խնդիրների բացահայտումը և կարգավորման ուղիների շրջագծումը:

Ատենախոսության հիմքում դրված նպատակին հասնելու համար ուսումնասիրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրվել է դրամավարկային քաղաքականություն հասկացությունը, էությունը և ներկայացվել է ժամանակակից փորձը,
- ուսումնասիրվել են դրամավարկային քաղաքականության և իրական հատվածի փոխառնչությունները,
- ուսումնասիրվել և գնահատվել է դրամավարկային քաղաքականության ազդեցությունը մակրոպրուդենցիալ և հարկաբյուջետային քաղաքականությունների վրա,
- ուսումնասիրվել և գնահատվել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների փոփոխությունների ազդեցությունը բանկային համակարգի վրա,

➢ ուսումնասիրվել և գնահատվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկերի նորմատիվային կապիտալում լրացուցիչ կապիտալի մասնաբաժնի փոփոխության ազդեցությունը վարկավորման ծավալների և դրամավարկային քաղաքականության գործիքակազմի վրա,

➢ գնահատվել է ՀՀ կենտրոնական բանկի միջամտության ազդեցությունը գների կայունության վրա,

➢ ուսումնասիրվել և գնահատվել են ՀՀ-ում փողի զանգվածի վրա ազդող գործոնները, դրանց կառավարման առանձնահատկությունները զարգացման արդի փուլում,

➢ ուսումնասիրվել և գնահատվել է կանխիկ և անկանխիկ գործառնությունների ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա, ինչպես նաև հետևանքները տնտեսության համար,

➢ ուսումնասիրվել և գնահատվել է ինովացիոն գործիքակազմի ներդրման ազդեցությունը տնտեսության, հատկապես՝ փողի զանգվածի վրա,

➢ ուսումնասիրվել և գնահատվել է հրապարակային առաջարկվող արժեթղթերի հավանական մանիպուլյացիաների ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա, հաշվի առնելով, ինչպես ՀՀ-ում ցուցակվող արժեթղթերի սակավությունը, այնպես էլ ֆոնդային բորսայի թույլ զարգացվածությունն ու կիրառական հետաքրքրության բացակայությունը,

➢ հարկաբյուջետային քաղաքականության մասով՝ ուսումնասիրվել և գնահատվել է հարկերով բեռնվածության և կախվածության մակարդակը և դրա ազդեցությունը դրամավարկային քաղաքականության, ինչպես նաև գործազրկության մակարդակի կրճատման վրա,

➢ ներկայացվել է ՀՆԱ և փողի զանգվածով արտահայտված փողի «քնելու» միտումը,

➢ ուսումնասիրվել և վեր են հանվել մի քանի նոր եզրույթներ, որոնք բնութագրում են տնտեսական քաղաքականության մեջ առանձին կարգավորման ուղին:

<u>Հետազոտվող հիմնական գիտական արդյունքը և նորույթը:</u> Կատարված հետազոտությունների, վերլուծությունների և ներկայում առկա հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքում հետազոտությունում կարևորել ենք ստորև ներկայացված կիրառական գիտական արդյունքները, որոնք գիտական նորույթ են պարունակում: Մասնավորապես.

➢ ՀՀ տնտեսական քաղաքականությանն վերլուծության հիման վրա առաջարկվել է բանաձև, ինչը հնարավորություն է տալիս որոշել ՀՀ ԿԲ և կառավարության ազդեցությունների մասնաբաժինները տնտեսության վրա, ինչպես նաև գնահատվել է գնաճի առաջացման չափը՝ ըստ պատասխանատուների: Ընդ որում, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի ազդեցությունները գնահատվել են «1»-ական

գործակիցներով և դրանց հարաբերությունը կազմել է 1:1-ին: Վերջինիս արդյունքում առաջարկվում է սահմանել նաև գնաճի թույլատրելի շեղման համար պատասխանատվության շրջանակ, և սահմանային կառավարման ժամանակաշրջան ու ճանապարհային քարտեզ, ինչը նկարագրված կլինի կոնկրետ գործողությունների տրամաբանական և փոխկապակցված հաջորդական գործառույթների տեսքով: Դրանց չիրականացման համար առաջարկվում է կիրառել պատասխանատվության կառուցակարգեր՝ տնտեսության պարալիզացման և տնտեսական շոկերի առաջացման համար,

- բացահայտվել է արժեթղթերի թողարկման, ցուցակման և տեղաբաշխման գործուն կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությունը, որը հարկաբյուջետային քաղաքականության մասով կառավարությանը կդարձնի թիվ մեկ պատասխանատու հակակշռող ֆինանսական գործիքներով՝ պետական պարտատոմսերով, փողի զանգվածի կառավարմանը միջամտելու գործում: Սրա արդյունքում, գնաճի պարագայում, որպես տնտեսության կառավարման բարձրագույն մարմին, պատասխանատվություն կսահմանվի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի չկատարման համար, իսկ ՀՀ կենտրոնական բանկը՝ նույն օրենքի 4-րդ հոդվածի խախտման համար, սխալ քաղաքականության կիրառման արդյունքում ՀՀ օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի կողմից հաստատված թույլատրելի շեղման համար,
- առաջարկվել է «քնած» կամ «քնող» փողի եզրույթ, որի էությունը կայանում է նրանում, որ տնտեսության մեջ առկա փողի զանգվածը տարեցտարի ավելի քիչ շրջապտույտ կատարելու հակում ունենալով ցույց է տալիս երկրի ներսում բնակչության խնայողություններ ձևավորելու հակումը, որն արտահայտվում է փողի շրջապտույտի արագության նվազմամբ,
- առաջարկվել է նոր՝ ՀՆԱ/վարկ հարաբերակցության վերին շեմ սահմանելու անհրաժեշտությունը, որի էությունը կայանում է նրանում, որ ֆինանսական շոկերին դիմակայելու համար, բացի Բազելյին մեթոդաբանությամբ բուֆերներ ստեղծելուց, շոկերը կանխելու համար պետք է երկրում սահմանվի վերին արգելակող ցուցանիշ՝ ՀՆԱ-ի նկատմամբ երկրում տեղաբաշխված վարկային միջոցների համար: Հետագայում վարկ/ՀՆԱ ավելի մեծ ճեղքերից (GAP) խուսափելու և դրանք կանխելու համար, կախված երկրի սահմանված տնտեսական ախորժակից և հետաքրքրությունից, կապիտալի հակացիկլիկ զսպողական բուֆերին զուգընթաց, առաջարկվող արգելակող ցուցանիշը կարող է փոփոխվել,
- ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է մանիպուլյացիոն հավանական սխեմա և այն ներկայացվել որպես գիտական նորույթ, ինչը էական դեր կարող է ունենալ IPO իրականացնող կազմակերպության զարգացման և թափանցիկության ապահովման գործում: Նորույթի էությունը կայանում է նրանում, որ մեր

առաջարկած «կապիտալի մկներ» կամ «դիվիդենտ կրծողներ» նոր եզրույթը բնութագրում է ընկերության կառավարման մարմինների կողմից ցուցանիշների արհեստական բարելավման էությունը: Իսկ «կույր բաժնետերեր» եզրույթը բնութագրում է կազմակերպության կառավարման ամենօրյա գործընթացում մասնակցություն չունեցող բաժնետերերի կողմից ներդրված ակտիվների ճակատագրի չտիրապետման և կառավարման գործընթացներում մասնակցության իրավասության և հնարավորության բացակայության պատճառով վնասների կրման պրակտիկան, որի արդյունքում ի հաշիվ հասույթի, կեղծ կամ տրանսֆորմացված ճանապարհով, արագացված կերպով իրականացվում է IPO-ի անցնցում տեղաբաշխում և կանոնադրական կապիտալի ուռճացում, ինչը դասական բաժնեմասնակցության ձև չէ:

<u>Հետազոտության օբյեկտը և առարկան:</u> Հետազոտության օբյեկտն է ՀՀ դրամավարկային, և հարկաբյուջետային, քաղաքականությունները, իսկ առարկան՝ այդ քաղաքականությունների փոխառընչություններն և փոխհարաբերությունները:

<u>Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:</u> Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել հայրենական ու արտասահմանյան մասնագիտական գրականությունը ու գիտական հրապարակումները, ՀՀ-ում գործող իրավական ակտերը և նորմատիվային փաստաթղթերը, ՀՀ ԿԲ և ՀՀ ՎԿ հրապարակված վիճակագրական հաշվետվությունները, Համաշխարհային բանկի վիճակագրական և մյուս տվյալների բազաները, Միջազգային հաշվարկների բանկի (BIS) կողմից հրապարակված պաշտոնական տեղեկագրերը, ՀՀ առևտրային բանկերի ինտերնետայինկայքերը և հրապարակված ֆինանսական հաշվետվությունները, VISA, MasterCard վճարահաշվարկային համակարգերի, EMVCo® և PCI DSS միջազգային քարտային ինդուստրիայի ստանդարտացման ընկերությունների հրապարակումները, Ֆինանսական միջազգային ստանդարտները(ՖՀՄՍ/IFRS), Աուդիտի միջազգային ստանդարտները(ԱՄՍ/IAS), պաշտոնական վիճակագրական-տեղեկատվական բազաները և այլն: Հետազոտության ընթացքում օգտագործվել են վիճակագրական ու տրամաբանական, աղյուսակային, հաշվարկային, համեմատական, անալիզի և սինթեզի, ինդուկցիայի և դեդուկցիայի, գիտական աբստրահման, համակարգչային վերլուծությունների և տրամաբանական այլ գործիքակազմը, իսկ Միջազգային հաշվարկների բանկի(BIS) կողմից առաջարկվող ճեղքի հաշվարկման համար օգտագործվել է MC Excel ծրագրային համակարգում Hodrick-Prescott ֆիլտրը՝ երկարաժամկետ միտումը հաշվարկելու համար:

<u>Հետազոտության փորձարկումը և հրապարակումը:</u> Ատենախոսության հիմնական դրույթները և հետազոտության արդյունքները քննարկված են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, ինչպես նաև «ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Մ. Քոթանյանի ծննդյան 95-ամյակին և գիտության համաշխարհային օրվան նվիրված գիտաժողով»-ի ընթացքում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են 6(վեց) գիտական հոդվածներում:

Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ մեր երկրում անդրադարձ են կատարել Ա. Մարկոսյանը, Վ.Օրդուխանյանը, Լ.Բաղանյանը, Հ.Խուրշուդյանը, Կ. Աբգարյանը, Վ.Պիվազյանը, Տ. Սարգսյանը և այլոք: Վերջին տարիներին դրամավարկային քաղաքականության վերաբերյալ իրենց ատենախոսություններում անդրադարձել են Ս. Ռ. Լևոնյանը «ՀՀ դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունության տնտեսամաթեմատիկական վերլուծությունը» (2022թ.), Վ. Լ. Տեփոյանը «Ֆինանսական կայունության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (2022թ.), Հ. Ռ. Քամալյանը «Գնաճի նպատակադրման ռազմավարության արդյունավետությունը(ՀՀ օրինակով)» (2014թ.):

<u>Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:</u> Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ յուրաքանչյուրը երեք ենթագլուխներով, եզրակացությունների և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսությունը պարունակում է 22 աղյուսակ, 2 գծապատկեր և ներկայացված են թվով 3 հավելվածներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են առարկան և օբյեկտը, ներկայացված են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտա–գործնական նշանակությունը:

Ատենախոսությանառաջին՝ **«Դրամավարկային քաղաքականություն հասկացությունը, փորձը և կապն իրական հատվածի հետ»** գլխումուսումնասիրվելենդրամավարկային քաղաքականություն (այսուհետ՝ ԴՎՔ) հասկացությունը, ԴՎՔ իրականացման և կարգավորման ժամանակակից փորձը, ԴՎՔ և իրական հատվածի միջև կապը: ԴՎՔ հասկացությունում ուսումնասիրվել է ՀՀ Սահմանադրությամբ և «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կենտրոնական բանկին տրված լիազորությունների, նպատակների շրջանակը, ԴՎՔ խնդիրները, տրվել է մեկնաբանում գնաճի վերաբերյալ: Մեկնաբանվել և տարանջատվել են ըստ Ջոն Մեյնանդ Քեյնս և Միլտոն Ֆրիդմանի:

Մակրոտնտեսական առումով պետք է մակրոտնտեսական որոշումներ կայացնողները որոշեն, թե երկրում տնտեսական կայունության ապահովման համար առաջնահերթություն տալիս են գների ճշգրտումների արդյունքում կայունության ապահովմանը, թե՝ փոխարժեքին:

Կենտրոնական բանկի կարևորագույն գործիքներից մեկը նաև պահուստավորման տոկոսադրույքն է, որը կարգավորվում է «Կանոնակարգ 2»-ով:

Ներկա փուլում դրամավարկային քաղաքականության հիմքը փողի զանգվածն է, ինչն անվտանգության, ինչպես նաև անկանխիկ փողով

դրամաշրջանառության զարգացման տեսանկյունից խիստ արդիական է: Նշված համատեքստում անկանխիկ փողերի կիրառման համար մեծ զարգացում է ապահովել ինչպես վճարային քարտերով վճարումների և փոխանցումների իրականացումը, այնպես էլ վճարային դրամապանակներով վճարումների, փոխանցումների իրականացումը:

Պետք է նշել, որ անկանխիկ փողերի ապահովման համար որպես վճարային քարտային համակարգեր աշխարհում լայն տարածում ունեն VISA, MasterCard, UnionPay, JSB, DinersClub, AmEx և այլ միջազգային վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից թողարկվող և դրան անդամակցող երկրների կողմից թողարկվող վճարային քարտերը, իսկ վճարային դրամապանակների մասով PayPal, ApplePay, GooglePay, SamsungWallet, GarminPayև այլն: ArCa պրոցեսինգը, ինչպես մնացած դրամապանակները, հանդես է գալիս ArCa դրամապանակով (ArCaApp), որով հնարավոր է իրականացնել տեղական թե՛ պետական, թե՛ մասնավոր կառույցներին վճարումներ: Իսկ վճարային դրամապանակների մասով դրանք մասնավոր սեփականության վրա հիմնված, լիցենզավորված, վճարահաշվարկային կազմակերպություններ են. TelCell, iDram, EasyPay, MobiDram և Upay:

Այսպիսով կարող ենք եզրահանգել, որ անկախ երկրի տնտեսական զարգացման աստիճանից, դրամավարկային քաղաքականության գործիքակազմը, դրա ռացիոնալ ու թափանցիկ կիրառումը մեծ ազդեցություն է ունենում երկրի տնտեսության վրա: Մասնավորապես, անկանխիկ փողերով վճարումների և փոխանցումների իրականացումը նպաստում է դրամավարկային քաղաքականության արդյունավետությանը, բնակչության շրջանում պետության կողմից վարվող քաղաքականության նկատմամբ վստահության բարձրացմանը, տնտեսական զարգացմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը:

Տնտեսական քաղաքականության մեջ դրամավարկային քաղաքականությունն իրական հատվածի վրա ազդում է անուղղակի կերպով, իսկ հարկաբյուջետայինը՝ ուղղակի: Դա է պատճառներից մեկը, որ երկրումհարկաբյուջետային քաղաքականության պատասխանատուի՝ կառավարության, կողմից իր հետաքրքրության ոլորտներում առավել է լինում տնտեսական աճը, քան մնացած բոլոր հավասար պայմաններում: Իսկ դրամավարկային քաղաքականության մասով չի առաջանում անմիջականորեն կամ ուղղակի ազդեցություն:

Առհասարակ, կենտրոնական բանկի կողմից իրականացվող քաղաքականությունների ազդեցությունն անուղղակի կերպով լինում է ոչ միայն իրական հատվածի վրա, այլ նաև հանրային կամ պետական, ֆինանսական և ոչ ֆինանսական, ոչ առևտրային և տնային տնտեսությունների վրա: Այսինքն, դրամավարկային քաղաքականության ազդեցությունը, թեև անուղղակի կերպով, բայց համընդհանուր է անդրադառնում տնտեսության վրա, ինչն էլ բերում է տնտեսական միջավայրի փոփոխության՝ դրամավարկային քաղաքականության ռազմավարությամբ ամրագրված նպատակներին հասնելու համար:

Ատենախոսության երկրորդ **«Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների փոխառնչությունները և առանձնահատկությունները**

ՀՀ-ում» գլխում ներկայացվել են գների և ֆինանսական կայունության ապահովմանը, որոնք ՀՀ կենտրոնական բանկի վերապահված անկախ, առանց որևէ կառավարման մարմնի ենթակայության, գործառույթներն են, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով[1]:

Ատենախոսությունում դիտարկվել են մի քանի տարբեր հանգամանքներ, որոնք կախված ՀՀ ԿԲ կողմից վարվող քաղաքականությունից ուղղակի կամ անուղղակի կերպով է անդրադարձել տնտեսության կայունության վրա: Այսինքն, քննարկման առարկա է դիտարկվել այն հանգամանքը, թե ՀՀ ԿԲ-ն իր իրավասության ներքո գտնվող հնարավորություններն ու միջոցները որքանով է օգտագործել ի շահ ՀՀ տնտեսության զարգացմանը, Փողի գինը, կարելի է դիտարկել և հասկանալ պահուստավորման տոկոսադրույքի փոփոխությունից նաև: Գնահատելու համար ԴՎՔ տոկոսադրույքների փոփոխությունների ազդեցությունը տնտեսական համակարգի վրա դիտարկվել է մի քանի փոփոխություններ և միջամտություններ ՀՀ ԿԲ կողմից, որոնք ըստ մեր դատողությունների ունեցել են էական ազդեցություն տնտեսության վրա: Մասնավորապես՝

- Դիտարկվել է տնտեսության մեջ ֆիսկալ, դրամավարկային և արժութային քաղաքականությունների մասնաբաժինները ՀՆԱ-ում և արտահայտել այն բանաձևի տեսքով,
- Դիտարկել է դրամավարկային քաղաքականության գործիքների փոփոխություն-ների դինամիկան, ազդեցությունը և հնարավոր հետևանքները,
- Փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

ՀՆԱ-ում ֆիսկալ, դրամավարկային և արժութային քաղաքականությունների մասնաբաժինները դիտարկելով մեր առջև խնդիր է դրել հասկանալու, թե տնտեսության մեջ կառավարությունն ու կենտրոնական բանկն իրարից անկախ ինչ չափով ու ձևով են ազդում, որը բերում է տնտեսության զարգացմանը: ՀՆԱ-ում քաղաքականություններիմասնաբաժինների գնահատման համար սահմանվել է ֆինանսական քաղաքականության նոր բանաձև, որը արտահայտել է հետևյալ կերպ՝ **EP=FP+MP+FEP**[2]

Որտեղ՝ EP-ն տնտեսական քաղաքականությունն է (**Economypolicy**), FP-ն ֆիսկալ կամ հարկաբյուջետային քաղաքականությունը (**Fiscalpolicy**), MP-ն մոնետար կամ դրամավարկային քաղաքականությունը (**Monetarypolicy**), FEP-ն արտարժութային քաղաքականությունը (**Foreign Exchange policy**):

Մեր կողմից առաջարկված բանաձևում տնտեսական քաղաքականությունը դիտարկել ենք 100 տոկոս ըստ ՀՆԱ-ի: Դրամավարկային քաղաքականության հաշվարկում ներառել ենք փողի ագրեգատները(տարեկան միջինով), միջազգային պահուստները և զուտ ներքին արդյունքը, իսկ հարկաբյուջետայինքաղաքականության մասով՝ բյուջեի մուտքերն ու պաշտոնական

---

[1]ՀՀ Սահմանադրություն, գլուխ 14, հոդված 200, 1-ին մաս, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723 (վերջին մուտք 31.03.2023թ.)

[2]Բանաձև ներկայացված է հեղինակի կողմից որպես գիտական արդյունք «The effect of changes in monetary policy interestrates on the banking system» հոդվածում, Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր, հրապարակված 10.01.2023թ., https://doi.org/10.56243/18294898-2022.4-23 (վերջին մուտք 31.03.2023թ.)

տրանսֆերները նվազեցված բյուջեի դեֆիցիտը: Սահմանված բանաձևի համաձայն արժութային քաղաքականության մասնաբաժինը դիտարկվել է ՀՆԱ-ից ֆիսկալ և մոնետար քաղաքականությունների հանրագումարի տարբերությունը՝ FEP=EP–(FP+MP): Նշվածի արդյունքում կազմել ենք Աղյուսակ 1-ը և հաշվարկել յուրաքանչյուր քաղաքականության մասով բացարձակ և հարաբերական ցուցանիշներ:

Աղյուսակ 1

ՀՆԱ-ում տնտեսական քաղաքականությունների բացարձակ և հարաբերական մասնաբաժինները (մլն ՀՀ դրամ)

Տարի	ՀՆԱ շուկայա-կան գներով	Բացարձակ			Հարաբերական		
		Մոնետար	Ֆիսկալ	Արժութային	Մոնե-տար/%/	Ֆիս-կալ/%/	Արժու-թային/%/
2022	8,496,777.90	5,617,304.07	2,242,590.40	636,883.43	66	26	7
2021	6,982,962.50	5,375,054.97	1,423,396.90	184,510.63	77	20	3
2020	6,181,902.60	4,715,582.75	1,274,736.30	191,583.55	76	21	3
2019	6,543,321.80	4,177,259.70	1,550,976.70	815,085.40	64	24	12
2018	6,017,035.20	3,825,738.08	1,279,071.00	912,226.12	64	21	15
2017	5,564,493.30	3,371,247.49	1,009,762.60	1,183,483.21	61	18	21
2016	5,067,293.50	3,008,008.08	927,809.10	1,131,476.32	59	18	22
2015	5,043,633.20	2,631,723.27	960,455.60	1,451,454.33	52	19	29
2014	4,828,626.30	2,479,945.48	1,087,897.80	1,260,783.02	51	23	26
2013	4,555,638.20	2,308,493.13	1,030,209.20	1,216,935.87	51	23	27
2012	4,266,460.50	1,904,366.77	915,187.70	1,446,906.03	45	21	34
2011	3,777,945.60	1,667,336.52	800,413.30	1,310,195.78	44	21	35
2010	3,460,202.70	1,323,091.23	630,420.00	1,506,691.47	38	18	44
2009	3,141,651.00	1,219,620.36	472,582.70	1,449,447.94	39	15	46
2008	3,568,227.60	1,166,842.59	777,719.50	1,623,665.51	33	22	46
2007	3,149,283.40	982,952.19	651,585.50	1,514,745.71	31	21	48

Աղյուսակ 1-ով փաստվում է, որ արդեն 2020-2022թթ.-ին տնտեսությունը մինչև 70 տոկոս, որոշ տարիներ դրանից էլ և ավել կախվածության մեջ է ՀՀ ԿԲ վարած դրամավարկային քաղաքականությունից, իսկ եթե դրան էլ զուգահեռ դիտարկում ենք, որ նույն ժամանակահատվածում արժութային քաղաքկանության մասնաբաժինը կազմում է 2020-2021թթ 3-ական տոկոս, իսկ 2022թ.-ին արդեն 7 տոկոս, ապա ստացում է, որ տնտեսության ներկա իրավիճակի թիվ մեկ պատասխանատուն ՀՀ կենտրոնական բանկն է: Եվ քանի որ ՀՀ ԿԲ-ն լիազոր և կարգավորող մարմինն է ֆինանսաբանկային հատվածի, ապա ՀՀ ԿԲ վարած դրամավարկային և արժութային քաղաքականության արդյունքը հարկ ենք համարել դիտարկել հատկապես բանկային համակարգի վրա ազդեցությամբ:

Գնահատելու համար ԴՎՔ տոկոսադրույքների փոփոխությունների ազդեցությունը ուսումնասիրությունը պրոյեկտել ենք տոկոսադրույքների փոփոխությունը բանկային համակարգի համատեքստում: Վերջինս լինելով փողի առաջարկի կամ գնի կարգավորման գործընթաց՝ ուսումնասիրության հիմքում դրվել է հետևյալը.

➢ Բանկերի նորմատիվային կապիտալում լրացուցիչ կապիտալի մասնաբաժնի փոփոխությունը և դրա ազդեցությունը բանկային համակարգի, տնտեսության և գների կայունության վրա,

➢ Փողային փոխանցումների, ավանդների և վարկերի ներգրավման և տեղաբաշխման արդյունքում պահուստավորման տոկոսադրույքը:

Բանկային համակարգի կենսունակությունն ու ֆինանսական վիճակը, գնահատելու նպատակով ուսումնասիրվել է բանկերի կապիտալի կառուցվածքն ու հնարավորությունները: Նկատվել է, որ 08.05.2020թ. ընդունված ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 73 որոշմամբ բանկերի նորմատիվային կապիտալի հաշվարկային մեծությունը հիմնական կապիտալի 25%-ից փոփոխվել է 30%-ի[3]: Օրինակ, մեծանում են բանկային համակարգի համար ստեղծվում է լրացուցիչհնարավորությունները Ն3[1], Ն3[2], Ն4[1] և Ն4[2] նորմատիվների հաշվարկներում[4]:

Սակայն վերը նշված լրացուցիչ հնարավորությունները բանկերը չեն օգտագործել համաչափ վարկերի տեղաբաշխման համար (տես Գծապատկեր 1):



Գծապատկեր 1: Բանկային համակարգի կողմից տեղաբաշխված վարկերի և ներգրված ավանդների դինամիկան

Վերջին տարիներին համաշխարհային տնտեսությունում, հատկապես COVID-19 համավարակի բռնկումից հետո, կտրուկ աճեց անկանխիկ վճարումները: Հայաստանի համար հատկանշական եղավ 2022թ. նրանով, որ համաշխարհային հսկաներից ApplePay-ը և GooglePay-ը «մուտք գործեցին» այստեղ:

Բացի այս, դիտարկել ենք նաև և՛ կանխիկ, և՛ անկանխիկ փողերի կիրառման ազդեցությունները ՀՀ ԴՎՔ վրա: Նշվածներն էականորեն են անդրադառնում փողի զանգվածի վերահսկման ու կառավարման վրա տնտեսության մեջ և ուղղակիորեն անդրադառնում են փողի զանգվածի շրջապտույտի արագության, փողի զանգվածի

[3] ՀՀ ԿԲ խորհուրդ, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. փետրվարի 9-ի թիվ 39-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին, 1-ին կետ, 2-րդ ենթակետ, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142436 (վերջին մուտք 31.03.2023թ.)

[4] ՀՀԿԲ կայքէջ. Իրավական դաշտ, Բանկային գործունեություն, Կանոնակարգեր, Կան. 2 «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները», հոդված 23, էջ 5, https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx(վերջին մուտք 31.03.2023թ.)

կշռման թափանցիկության և ճշգրտության վրա: Թոքենիզացված վճարամիջոցներով գործառնությունների համատեքստումանդրադարձել ենք ApplePay-ին և GooglePay-ին, որոնց ինտեգրման արդյունքում թոքեններով տեղական կամ միջազգային գործարքները միջազգային քլիրինգով անցնելիս և՛առաջացնում են փողի արտահոսք՝ դոլարով, և՛ ազդեցությունը ԴՎՔ վրա:

Անկանխիկի ազդեցությունը փողի զանգվածի վերահսկման ու կառավարման վրա, հատկապես փողի զանգվածի կշռման թափանցիկության և ճշգրտության վրա դիտարկել ենք փողի շրջապտույտի արագությունը, Ի. Ֆիշերի MV=PT[5] հավասարմամբ և ՀՆԱ-ի և փողի զանգվի հարաբերակցությամբ նկատել ենք, որ տարեց տարի փողը «Քնում» է: Այս համատեքստում առաջարկել ենք «Քնող» փողեր նոր տնտեսագիտական եզրույթը:

Ատենախոսության երրորդ՝ **«Գների կայունության ապահովումը և փողի զանգվածի կառավարման կատարելագործումը»** գլխում ուսումնասիրվել են ոչ միայն գների կայունությանը հասնել շուկայական միջոցառումների օգնությամբ, այլ նաև տնտեսական կյանքին ուղղակիորեն միջամտելովտնեսական քաղաքակա-նության պատասխանատուներըպետք է իրականացնեն իրենց կառավարման և վերահսկման ներքո գտնվող քաղաքականությունների գործիքակազմերն այնպես, որ վերջիններիս արդյունքում իրականացվի գների կայունություն, այլ ոչ թե տեղի ունենա գնաճ: Այդ իսկ պատճառով սույն գլխում ուսումնասիրվել է հարկերով բեռ-նվածության մակարդակը, հարկերից բյուջեի կախվածությունը հարկաբյուջետային քաղաքականության համատեքստում, իսկ մակրոպրուդենցիալ քաղաքականության մասով՝ բազելային կոմիտեի կողմից սահմանված չափորոշիչներով ֆինանսական շոկերին դիմակայելու ունակությունը: Ուսումնասիրությամբ փաստվել է, որ բյուջեն խիստ կախման մեջ է հարկերից, իսկ ՀՆԱ-ն գրեթե 20% կախման մեջ է հարկերից Մակրոպրուդենցիալ քաղաքականության մասով ուսումնասիրել ենք վարկ/ՀՆԱ ճեղքը տարեկան ցուցանիշներով այնպես ինչպես պահանջվում է Բազել III-ով, և եռամսյակային կտրվածքով. ինչպես հաշվարկում է ՀՀ ԿԲ-ն: Երկու դեպքում էլ փաստվել է, որ ՀՀ ԿԲ կողմից 2019-2022թթ. ժամանակահատվածում, բացի 2020թ. 2-րդ եռամսյակից 2021թ. 3-րդ եռամսյակը, մնացած բոլոր ժամանակահատվածում ՀՀ ԿԲ-ն պետք է կիրառել բուֆերներ, որը որ չի կիրառվել:

Փողի զանգվածի վրա մեծ ազդեցություն ունի նախ կազմակերպությունների կողմից հրապարակային առաջարկի տեսքով (IPO) կանոնադրական կապիտալի համալրումը: Նշվածի արդյունքում կազմակերպություններում՝ հատկապես ֆինանսական, իրականացվում է կապիտալի համալրում, որի արդյունքում ստեղծվում է կազմակերպությունում հավելյալ իրացվելիություն, ինչպես նաև հավելյալ փող: Սա նշանակում է, որ ֆինանսական կազմակերպությունների կողմից բաժնետոմսերի հրապարակային առաջարկով միջոցների ներգրավումն առավել արդյունավետ է վերջիններիս համար և՛ իրացվելիության, և՛ անտոկոս փողի տեսանկյունից: IPO-ներով կանոնադրական կապիտալի համալրման իրականացու-մը դիտարկել ենք եկամտի հնարավոր մանիպուլացիայի համատեքստում, հաշվի

[5] "The Purchasing Power of Money, its Determination and Relation to Credit, Interest and Crises", 2004, Chapter IX, page 111, https://eet.pixel-online.org/files/etranslation/original/Fisher%20The%20Purchasing%20Power%20of%20Money.pdf (last entered 31.03.2023)

առնելով այն, որ ՀՀ-ում ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված է 721 բաց բաժնետիրական ընկերություններից միայն 27-ն են Հայաստանի Ֆոնդային Բորսայի թողարկողներ՝ 3,74 տոկոսը: Կարևոր է դիտարկել նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ում գործող բաժնետիրական 721 ընկերություններից 11 կամ 1,53 տոկոսն են ցուցակում իրենց բաժնետոմսերը բորսայում, ինչը նշանակում է, որ Հայաստանում դեֆակտո առկա չէ բաժնետոմսերի հրապարակային առաջարկ:

Այնուամենայնիվ, իրականացնելով հասույթի տրանսֆորմացում նշանակում է, որ չի առաջանում բիզնես գործընթացների իրականացման արդյունքում ակնկալվող համապատասխան շահույթ, որը հարկումից հետո դիվիդենտի տեսքով պետք է բաշխվեր մասամբ կամ ամբողջությամբ բաժնետերերին: Արդյունքում չի ձևավորվում՝

- Իրական շահույթը, որը այլ հավասար պայմաններում պետք է ձևավորվեր բիզնես գործընթացների իրականացման արդյունքում,
- Չի ձևավորվում և չի վճարվում համապատասխան շահութահարկը և ԱԱՀ-ն բյուջե,
- Չի վճարվում այն ծավալով շահաբաժիններ, ինչի արդյունքում էլ չի վճարվում դիվիդենտի վճարման դիմաց եկամտային հարկը:

IPO իրականացման ժամանակ «կապիտալի մկներ»-ի կամ «դիվիդենտ կրծողներ»-ի որոշումների իրականացման արդյունքում կարևոր է դիտարկել նաև դրանց մոտեցումները համաձայն ՖՀՄՍ-ների:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ հասույթի տրանսֆորմացումը բաժնետոմսերի անմիջականորեն ազդում է մեկ բաժնետոմսի դիմաց վճարվող դիվիդենտի գումարի վրա ոչ միայն այն պատճառով, որ արտացոլված շահույթը հասույթից բաժնետոմսերի տրանսֆորմացման արդյունքում փոքրացրել է առկա կամ ապագա ժամանակաշրջանի շահույթը, այլ նաև այն պատճառով, որ նոր տեղաբաշխված բաժնետոմսերի քանակի ավելացումը ընդհանուր բաժնետոմսերի կշռված միջին քանակի հաշվարկում, առավել է փոքրացնում դիվիդենտի չափը: Նշված իրադարձությունների ի հայտ գալն անմիջականորեն կարող է հանգեցնել կազմակերպության տարեկան աուդիտորական դիտարկման արդյունքը չլինի դրական կարծիքով՝ձևափոխված, բացասական կամ կարծիքից հրաժարմամբ: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ԴՎՔ ճիշտ կառավարման համար կարևոր է փողի զանգվածի ճիշտ կառավարումը, որի իր մեջ ներառում է արտահոսքերի դեմ պայքարն ու տնտեսական շոկերի ժամանակ համապատասխան միջոցառումներ իրականացումը:

Բացի գնաճի կարգավորումից երկրում ֆինանսական և տնտեսական անվտանգության համար կարևոր է նաև ֆինանսական կայունությունը: Ֆինանսական կայունության համար կենտրոնական բանկը իրականացնում է մակրոպրուդենցիալ քաղաքականություն: Այս քաղաքականության նպատակը ֆինանսական հատվածի համակարգային ռիսկերի բացահայտումն, զսպումը և չեզոքացնում է, որոնք պետք է նպաստեն երկրում ֆինանսական կայունության ապահովմանը: Քանի որ բանկերում վարկային տեղաբաշխման դինամիկան

այնպես չի ինչպես արտերկրից ստացված տրանսֆերները, ապա կապիտալի հակացիկլիկ բուֆերով դիտարկել ենք ֆինանսական կայունության համատեքստում:

Այսպիսով, գների և ֆինանսական կայունության բարձր մակարդակի հասնելու համար կարևոր է դրամավարկային, մակրոպրուդենցիալ, արտարժութային և հարկաբյուջետային քաղաքականությունների ոչ միայն առանձին-առանձին հետևողականության դրսևորումը և միջոցառումների իրականացումը, այլ նաև նշված քաղաքականությունների ընդհանրական սինթեզ:

Ատենախոսության թեմայի շրջանակներում դրված խնդիրներին ու նպատակներին համապատասխան արված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք հետևյալ **եզրակացություններին**.

1. Դրամավարկային քաղաքականության արդի վիճակը գնահատելու, ի հայտ եկած կամ սպառնալիք խնդիրների գնահատման և չափման համար դիտարկվել են այնպիսի արդի հիմնախնդիրներ, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաներով կարգավորումները՝ թոքենիզացիան, և՛ որպես ժամանակակից էլեկտրոնային վճարային համակարգերի համակցման և ինտեգրման միջոց, և՛ որպես փողի զանգվածի վրա անդրադարձող միջոց, էլեկտրոնային դրամապանակները (eWallet) միջազգային և տեղական թողարկողների համատեքստում, և՛ դասական դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների փոխառնչությունները, ինչպես նաև ազդեցությունը տնտեսական քաղաքականության վրա: Այս համախմբի սինթեզի արդյունքում եզրահանգել է, որ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ոչ միայն ապահովում է փողի զանգվածի հեշտ կառավարումը, այլ նաև կարգավորում է անվտանգությանը վերաբերող հիմնահարցերը, ինչպիսիք են փողի հափշտակման, կորստի և այլ ռիսկերը:

